ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական աշխատողի թափուր տեղի

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ մանկավարժի թափուր տեղերի համար.

1. « Ռուսաց լեզու» առարկա
2. «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական մոդուլներ

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է.

- Հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26- րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին
- Մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջներին:

Մրցույթն անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է քոլեջի կադրերի բաժին ներկայացնել՝

1) դիմում (Ձև1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝

Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև Սեպտեմբերի 15-ը ներառյալ, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 10:00-16:00-ը: Մրցույթը տեղի կունենա Սեպտեմբերի 19-ին:

Փաստաթղթերը ներկայացնել «Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ ք. Երևան, Բագրատունյաց 71, **Հեռախոս՝ 010-48-06-41, 48-71-80, +37477688283**